Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

M
C
R

Lwy ✓
222, 236, 237

~~46~~

66

Воспитанникъ Лазаревскій Институтъ отъ Его Превосходительства Христофора Ефимовича Лазарева приношеніе.

1854 г. изъ Парижа.

312
5

2000

à l'Institut Lazareff

202.4

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ ՈՒՐՈՒՄՆ

ԲԱՆ

ԱՌ ՄԽԻԹԱՐԵԱՆ ԹԻԽՏՆ

Ի ԴԻՄԱՑ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ

ՀԱՅՈՑ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

=ՌՅԲ=

281.6

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ ՈՒՐՈՒՄՆ

ԲԱՆ

ԱՌ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏՆ

Ի ԴԻՄԱՑ

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՅԱԿՈԲԱՅ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

1853 — ՌՅԲ

23058

ՄԵԾԱՐԳՈՑ

ԲԱՐԵՐԱՐՈՒ ՈՒՐՈՒՄՆ ԱԶՆՈՒԱԶԳՈՒՈՑ

ԵՒ

ԱԶԳԱՍԷՐ ՆԱԽԱՆՁԱՒՈՐԻ

ՀԱՅՐԵՆԻ ՓԱՌԱՑ ԵՒ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԱԶԳԻՍ

ՀԱՅՑԵԱԼ.

28-222
(2380
40)

236-2001

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Մերելի ընկերցող 'ի կարգէ բանից դիւրաւ կարեւ կալ 'ի վերայ ժամանակի գրութեան սորին, յաւաջ քան զամիսս ինչ լինել՝ այն ինչ երեւեալ հայ Ազգամատենին 'ի Մխիթարեանց Վենետկոյ ընդդէմ իտալախօս Պարսաւագրոյն որ զինքեանց, ուստի և չկարեաց իսկ խնդրել 'ի սմին բանս և խորհրդածութիւնս զորոց յետոյ քան զայնոսիկ դիպուածոց։

Արդէն գրեալ և աւարտեալ էր հայրենասէր հեղինակին զբանս, մինչչեւ Արշալուսոյն երկնեալ զաղօտանը-շոյլ շողն բանից Հօրն Գաբրիէլի Ավետիքեանց և այլոց ընդդէմ նմին ցասմամբ բողոքեալ, ուր որոյ չէր մարթ հեղինակին յաւելուլ 'ի նոսա բանս և զնոցունց, զի և ինքն զայնոսիկ աւուրս մեկնեալ 'ի հայրենիսն։

Յայսոցիկ զեկուցմանց թէպէտ անագան իմն և անպատեհ թուեսցի ընթերցանելեացդ. ազգիս հրատարակումն սակաւամանեայ բանից, բայց ընդդէմ էր ըղձից հայրենասիրին և նորուն բարերարի՝ ապարդիւն և ապախտ զերկս նոցուն առնել։

Ոյր վասն չհամարեալ ինչ զայնոսիկ պատճառանս ղյանձնարարեալն ինձ կամեցայ ընծայել 'ի լոյս զայս տետրակ՝ զի և անէրաւ զբպարտիչքն քրիստոսահիմն Եկեղեցւոյս և ընտանի թշնամիք Ազգիս ապացոյց մի և այլ յաւելցեն 'ի սրտի ոչչափ կարեվէր և յանիրաւի խոցոտեալ լինելոյն իւրեանց զհամայն սիրտս և զոգիս ընդհանուր Լուսաւորչարան հօտիս և ինքեանց համարիւն եղբարցս։

1853 Յունուար

* * *

ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ՀԱՅՐԵՆԱՓՐԻ ՈՒՐՈՒՄՆ ԲԱՆ

ԱՌ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏՆ Ի ԴԻՄԱՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ՀԱՅՈՑ

« Եթէ հարկանես զանգգաՃ 'ի մէջ առեանի՝ և անարգես զնա, ապայն ոչ մերժես զանգգամաւթի 'ի նմանէ։
(Առակ. Իէ. 22)։

Բանիցս անգամ թէպէտ յուշ ածելով զպատուիրան սիրոյն Յն և զօրինակ նեբողամիտ հեզութեանն, չկամէի ձեռնարկել յայս դուզնաքեայ բան, այլ բռնադատեաց զիս խստիւ հարկն անհրաժեշտ ազնուազգի բարերարին իմոյ և ազգասէր նախանձաւորի փառացն Հայրենեաց և օրինաց և ուղիղ հաւատոյն և արդարութեան և նախանձաւորութեան օրէնք, զոր կրեն անշուշտ ազգք ամենայն, և յաղթեցայ 'ի սիրոյ Ազգիս և Հայրենեացն, որում կամն միշտ անձնանուէր և պատրաստ մինչեւ 'ի մահ։ Օ՜ի եթէ ապա արդարութեան անձին խրատէ Սիրաքն մինչեւ 'ի մահ ճգնել, քանի՞ առաւել պարտ իցէ վասն ողջոյն Ազգի միոյ ճշմարտութեան, անարատ կրօնին և աներկբայելի հաւատոյն ուղղադաւան և քրիստոսահիմն եկե-

ղեցւոյն վկայել և պաշտպան կալ և զկա-
հան ճշմարտութեան քանից տալ ընդդէմ
նեաց թշնամւոյն, որ յայսոսիկ աւուրս
'ի ծոցոյ Ս.դրիական ծովոյն տեղացին 'ի
Հայաստան և կարեվէր խոցոտեցին զամե-
նայն սիրտ զնորուն Հարազատից։

Զգիտեմ ոչ ոքի ատելութեան և նա-
խանձու ոգւով ընդ ապիտացն և իմաս-
տունքն համարձակեցան ընդդէմ ճշմար-
տութեան մատուիլ և զոյն խաւար ա-
սել ոչ ամաչեցին և ոչ երկեան իսկ 'ի մար-
գարէին սպառնալեացն. և այնչափ եղեն
անխիղճք՝ մինչեւ զաղգ մի ընտիր՝ քահա-
նայութիւն տուրբ իբրեւ հերձուած դա-
տապարտել հրապարակական քանիւք, զի
գէթ ինքեանք արդարացին այնու առա-
ջի դատախազին. նա և զտաճարն Ս.տու-
ծոյ տուրբ՝ հերետիկոսութեամբ ապակա-
նել, և չիմանան իսկ թէ ինքեանք 'ի նոյն
անկանելոց են յՍ.տուծոյ ըստ Պօղոսի ըս-
պառնալոյն։

Ընթէ թշնամւոյն լինէր այս՝ արդարև
հանդուրժեալ տանէի յօժարութեամբ՝
թշնամութեան նորին պտուղ և արգասիս
համարելով. և իբրեւ զ'Յաւիթն այն ա-
սէի արտասուչ "Թէ թշնամւոյն նախա-
տեալ էր համբերէի արդեօք, կամ ատե-
լոյն մեծաբանեալ էր, թագչէի 'ի նմանէ
ներողամիտ լռութեամբ։" Իսկ դու, ով
Ախիթարեան ուխտ, քարեկամ սիրելի և

մոերիմ Յայոց, զի եղեւ քեզ, զքոյդ քաղցրութիւն բարեկամութեան՝ յանկարծ ի դժնդակ գառնութիւն փոխարկել, սիրոյն զանուշութիւն՝ ընդ անճաշակելի լեղւոյ. ընդ սիրելի ձայնելոյ զԱզգն Յայոց, հերետիկոս և հերձուածող անուանել. տուր ինձ իրաւունս քեզէն աստանօր, թւ հնար ինչ լցէ ըռել։ Արդնում, եթէ հնար լինէր ինձ ըստ Պօղոսի խրատուն, յետ այսչափ ի քէն նախատելոյ, դարձեալ ընդ քեզ զխաղաղութիւն առնել սիրէի և փոխանակ բամբասանացդ ոչ բամբասէի, ընդ անիծանելոյդ օրհնէի։

Այլ սակայն դու անցուցեր քան զչափն և զոր չկամէիր, թէ արասցեն քեզ մարդիկ՝ արարեր դու մեզ զայն, որով ի բերանոյ քումմէ դատեալ՝ արկեր զքեզ ընդ դատաստանօք բանիցս։

Որպէս նախատանաց տարար դու օտարախօս պարսաւապրին անանուն, այլ յորժամ իբրեւ հերետիկոս եւս նախատեաց զքեզ՝ լցար ցասմամբ և շարժեցար սատիկ սրտմտութիւն քոյին, մինչև ծանելոյ գաւազանաւ սրբոյն Պետրոսի Անկանդարացւոյ ելեր հարկանել զնա և որպէս թէ վիրաւորեցեր զգլուխ նորին՝ և ոչ գիտացեր թէ զքեզ ևս ընդ նմին մահու չափ վիրաւորեցեր։ Հերետիկոս և հերձուածող կոչեաց զքեզ Անանունն, վասն այն ուժգին հարեր զնա քումմովդ։ Իսկ

որդ մի թէ Յայն եւս կոչեաց զքեզ հե-
ռեւթիկաս, որ իրաւունս իսկ ունի կոչե-
լոյ և ոչ կոչէ, զի թերեւս շահեսցէ ըզ-
քեզ սիրով։ Յապա զիարդ ժարհեցար
յանիրաւի և զեկեղեցին Յայսոսանեայց
հարկանել միանգամայն ընդ պարտաւ-
գրելին։ որով 'ի դատաստանէ քումմէ դա-
տապարտեալ եղեր, զի եւս իրաւունս
Յայոց, ոչ Պետրոսին դաւազանաւ և եթ,
այլ և հատու տապարաւ ճշմարտութեան
պատառել զգլուխ քոյին։

Ահեծամեծ չարամտութիւդ 'ի քարկո-
ծելն ձեր զանուն, առ իմէ խոստեցու-
ցիք զձեռս յաջ և յահեակ եւս հարկանել,
և զանմեղ հօտն Ի՝ ուսաւորչեան չարաչար
վիրաւորել զբազարտական չարութեամբք։

Իսկ արդ՝ որ վիճիքդ ընդ իրեարս ըզ-
յանդիմանութիւն լսել խոժոռիք, որ ան-
մեղն և անպարտ, զիարդ լռել կարիցէ,
կամ ինչպէս ոչ ցասնուցու։ Բանզի որ
հայրենաւանդ ճշմարիտ օրինաց և կրօ-
նին նախանձաւոր է, հարկ 'ի վերայ նո-
րին կայ այսպիսեօք ըստ կարի իւրում
պաշտպան կալ պատուական Զգին իւ-
րոյ և զնորին անաւերիւր շաւիղ հաւա-
տոյ՝ հորդեալ 'ի նախնի հարցն անտի՝ ճըշ-
մարիտ և ուղիղ ցուցանել, յորմէ խոտոր-
եալ ելիք դուք յայլ ճանապարհ, գնալ
յամառ կամակորութեամբ ձերով։

Իբրեւ խորթ և օտար համարեալ զա-

ուակուղքդ իրաւունս համարիք Լատապոլ
լինել խորթք և հօրաւ Պապին ձերում,
որչափ առաւել ևս պարտ է հաւատարիմ
և աւանդապահ զուակաց պաշտպան կալ
արքայ հօրն մերոյ Պրիպոլի լուսաւորչին,
զոր յանիրաւի զնա ևս յափշտակել Լանայք,
որպէս թէ հնար լցէ մեզ որդւոց զեր-
կուս այլասեռ հոգեւոր Հայրս ասանալ։
Օգժոխալուր ձայն հերետիկոս բառին,
թէ քանի դառն է ոչխարիս լսելեաց, քաջ
'ի կշիռ եդեալ և հարեալք 'ի խղճէ մը-
ռայց ձերում, յարտաբերել զայն դժուա-
բանայք և զներումն խնդրէք՝ պահել դարձ-
եալ զմտերիմ բարեկամութիւնն առա-
ջին։ Ով անօրինակ կեղծաւորութեան,
զանդրելի հերձուածոյն անուն իբրու
չար անչարեա 'ի մէջ արկեալ՝ դարձեալ
զմտերմութիւն պահանջէք։ Որ լցէ այս
մտերմութիւն, հարցանեմ, թերեւս աղ-
գատիրութեանն՝ զոր պատրուակեալ էիք
մինչև ցայսօր, և նման գերեզմանաց բռե-
լոց գեղեցիկ ցուցեալ արտաքուստ բա-
նիւ բերանոյ և 'ի ներքուստ լի էք փտեալ
ոսկերօք աղգատեցութեան։ Շրթամբք
միայն կամեցայք պատուատիրել զաղգն
Հայոց ևս իրտ ձեր հեռացեալ մեկուսի էր
'ի նմանէ։ Կամուղ էին բանք ձեր քան ըղ
ձէթ, որպէս յանկարծ խատացեալ դար-
ձայք իբրեւ զլաք։ Եւ կատարեցաւ 'ի
վերայ ձեր առակն, "Բանք տատակաս-

պատուոյ կամուրջք են. բայց հարկանեն 'ի շուն մարմնոյ մարմին։ Զի՞նչ պարտաւորելի մարութիւն 'ի կենցաղավարութիւնս մարդկան՝ քան լինել կերպաւոր և մարդեղոյզ, քանզի բարուք խօսել և իրօք ամբարշտել, կերպարանել զԱստուծն և գործ զԱստուծոյն կատարել, հայել մերձենալ սիրոյ ողջունիս իբրեւ զՅովսեփ և զտուրն հերետիկոսութեան 'ի կոչս Հայոց խորտակուխ թափանցել։ Որ այն կերպեալ աղաղակութեան ոչ ինչ ձեր մեծաձայն հընչեալ 'ի Երուսաղեմն (այսու անուամբ պարտ է կոչել այսու հետեւ. քանզի վրիպեցաւ 'ի ճշմարիտ աղաղակութենէն իւրմէ)։

Փոխ հարեալ խրախոյս կարդալիք և յորդորեալ վաստակք զիրս Հայոց մանկլաւոյն լինել ամենայնիւ հայրենասէր։ Եւ զի՞նչ իցէ պարտ կատարեալ հայրենասիրութեան, հարցանեմ, և զի՞ պարտաւորութիւն ճշմարիտ հայրենասիրութեան, ո՛չ միայն ջանալ նկրտիլ ըստ երկրաւորին և եթէ պաշտպան կալ հայրենեացն, այլ և զան գործել ըստ հոգեւորին և ս նախանձաւոր լինել հայրենի աւանդութեանց, օրինաց և կրօնին, գառնալ 'ի Հայաստան և ո՛չ 'ի Հռոմ, սիրել զԵրուսաղեմ, և ոչ զԲաբելիա, փափագիլ առաւել Դրիգորի գահոյն Աթոռնէջ և Բռնակերտ և ոչ այլուստ օտարաւոյ, յուշ ածել զՆիփրատայ առագաստն, յու-

ուամբ՝ ի հոգին մկրտեցայք Դրիգորին ձեռամբ, ըմբռնել զՔրիստոս՝ ի գեղոցն ազգեն բուզիս սարդ և յատակ և ոչ յայլոց յեռոց պղտորելոց գեռոց. որդիական օրինօք սիրել, պատուել և հնազանդիլ երախտաւոր հարցն որքոց Թադէոսի, Դրիգորի Ներսիսի, Սահակայ, Մեսրոպայ և այլոց համանմանեցն, քան օտարաց։

Այս օրինակ հայրենասիրութեան յորդոր, ո՞ր ազգամիտ ազգասէր չունէր ակնարկել՝ ի գիրս և՝ ի բանս ձեր ցայժմ, արդ ընդէ՞ր յայլ ինն օտարածին բարբառ դարձուցէք զլեզուս ձեր։ Մի թէ առ նեղութեան և անձկութեան հասեալ՝ ի վերայ ուրացեալ զարեկամութիւն ձեր որ ընդ մեզ, որպէս Պետրոս զՏէրն. և անիծեալ մարդահաճութեամբ արդարանալ կամեցեալ՝ ի Հռոմայ առենին, էրկուցեալ երբէք՝ ի բանէն ապառնալեաց թէ «Ոչառաւած ցրուեսցէ զասկերս մարդահաճոյից»։ Ո՞ր օրէնք հրամայեցին ձեզ զայդ առնել, արդեօք քահանայապետանցն հրէից, զանպարտ ազգն Հայոց հերետիկոսութեան կապանօք՝ ի մահ դատապարտել իբրեւ զՅիսուս և այնու արձակել զձեզ՝ ի կաշկանդիչ կապանացն հանդերձ Բարաբբայ մահապարտին։ Մի թէ չգոյր հնար ձեզ այլով օրինակաւ արդարանալ և յաղթական լինել հակառակորդին առանց հերետիկոս կոչելոյ զեկեղե-

ցին Հայոց, եթէ չէր 'ի սրտի ձերում ոգի նենդութեան։ Եթէ յաւեան քարշէր զձեր Հռոմ, անդ պարտէր բանիւ բերանոյ տալ զվկայութիւն ճշմարտութեան և չամաչել, կամ թէ անխօս հեզոյն Յիսուսի նմանեալք մեռանիլ, քան ընդդէմ արդարութեան մեղանչել, Օ՜յդ արարեալ ազատեցայք այժմ յերկրաւոր տաճէդ Պապին, իսկ յայնժամ յերկնաւոր ա՜նաչառ ատենին Քրիստոսի, ոչ գիտեմ ո՞րպէս ազատելոց էք։

Խաբիս, ով Հռոմ խաբիս. զոքա՝ որ առ նախնի մեծ և երախտաւոր ծնօղս իւրեանց ապաշնարհ և անուպոյ գան, յուսան դու արդեօք քեզ անհարազատիդ և բազում միջոցաւ հեռաւորիդ երախտագէտ և հնազանդ գտանել։ Դայ ժամանակ, զի և զքեզ արհամարհեալ 'ի բաց կացցեն։ Որ 'ի բուն արմատոյ և յոստոյն Դրիգորի քանցեալ՝ 'ի ծառդ անբուն պատաւատեցան, հնո՞ր լցէ արդեօք շառաւիղդս արձակել, կամ ծաղկիլ պտղաբերութեամբ որպէս քեզ քարոզեն դ՝զոքա բարձրաբարբառ, ո՛չ ապաքէն յաւուր վիրաւմ հոգմոյ ատրճանաց կոծոպելոց են 'ի քէն։ Երանի թէ պատուաստէին անդրէն 'ի հայրենի յոտս իւրեանց, և ոչ յընդհակառակն ըստ ամենայնի։

Օ՜ան էր քեզ ասել զայսոսիկ, ով տուն Ամիթարայ, ոչ սակայն ծանր է քան զգ

դժուարաբառնալի բեռն հերետիկոսու-
թեան, զոր 'ի թեթեւ առնել զքեզ,
բառնալ կամիս տարապարտ 'ի վերայ թի-
կանց Հայոց, և կարծեցեր իմաստուն 'ի
մտի քում թէ իբրեւ անասուն՝ անխօս
լեալ առանց բնաւ արտմտութեան կրելոց
են յօժարութեամբ զայդ բեռն, և չիմա-
ցար՝ թէ ճշմարտութեան ուխտք զքեզ
և զբեռնդ զդեանի հարեալ անկուշէ ար-
դարակորով Հայն և զնովիմբ խաղ արար-
եալ անցանէ։

Երժանահաւատ և ճշմարիտ կարծեց-
եալ բանից ձերոց սիրաբար ունկն մա-
տուցանէ Հռոմ, զի եւս պիտոյ էր ձեզ
յուսահատաբար զերդումն եւս. 'ի վի-
յաւելուլ թէ "Հայք 'ի ներկայ աւուրս
Հերետիկոս են". ոչ գիտեմ յանցեալն եւս
է և յապագայն լինելոցս են։ Ո՞ի երդնուք,
զի տագնապիք, զի խուճապիք, թէ և 'ի
բիւր դէպս յանցաւորս գտանիցիք՝ ան-
փոյթ լերուք, զի չեն կամք Հռոմայ դա-
տապարտել զձեզ, մի թէ անմիտ իցէ նա,
ուր, և յո՞ր վայր կարէ գտանել իբրեւ ըզ
ձեզ իմաստուն, խորամանկ և հմուտ որ-
սորդս, որ պարծիք և խոստանայք և սուտ
յուսով պատրէք զդա, մեզմէս ճանա-
պարհաւ նման Վասակայ որսալ զամենայն
Հայաստանեայս յորոգայթն Խաղիոյ։
Կամ մեռ՞ ոչ Հռոմ, սուտ յուսոյս այս-
ուիկ, մինչեւ նուաղեացին քո աչք։

Բանի անվայելուչ էր խոհական հարցըդ անխորհրդաբար զանպատեհս խօսիլ և գրել, եթէ «Ախիթար Աբբայն իբրև եռեռս զմոլորութիւն և զխաղումն Աղգին՝ 'ի բաց առեալ զանձն 'ի նոցանէ չոգաւ 'ի տար աշխարհ». և թուի թէ զմարդարէին հրամանն կատարեաց, թէ «ելէք 'ի միջոյ նոցին՝ և 'ի սիրձս մի մերձենայք». կամ գուցէ ձայն և կոչումն Աստուածային որպէս առ Աբրահամ՝ և առ նա ասելի եղև միայն, «Ել յերկրէդ Հայաստանեայց և յԱզգէդ Թորգոմայ և եկ յերկիր զոր ցուցից քեզ, այս է 'ի Վենետիկ»։

Ով ճշմարիտ բանիս, և ով քաջանկատ ուշացն Ախիթարայ միանգամայն և արժանաւորութեան, որում և եթէ շնորհեցաւ 'ի վերուստ զհաւատոյ թերութիւնն Աղգին տեսանել։ Յառաջ քան զԱխիթար և յետոյ և 'ի ժամանակս նորին, պակասէին արդեօք 'ի մէջ հանուր Հայաստանեայց իմաստուն, ընտրեալ և հոգեւոր վարդապետք, զորոց անուանս աւելորդ համարիմ յիշատակել ասանօր, որպէս չկարացին նոքա տեսանել զարուուզի ընթացս Հայաստանեայց եկեղեցւոյ, և միայն շլակն Ախիթար եռեռս և խորշեալ 'ի նմանէ՝ առ զժառանգն Հայրենի, այս է զուզգամիտութիւն նախնեացն ըստ ձերում դիտման 'ի Վրիդարէն յինքն իջեալ,

ջոքաւ յայդր։ Զարմանալոյ արժանի բանք։ Մի թէ ուղղափառութի՞ն գանձ էր Հայրենի մթերեալ միայն 'ի Մխիթարն, զոր գրաւեալ յինքն՝ թող աւանդ զՀայաստան զուրկ և թափուր 'ի նմանէ, որով աւանիկ քաղցեալ յուղիղ դաւանութենէ անտի, մեռանի սովալուկ։

Ընդէր ամաչէք այսպէս խոստովանիլ ստոյգ, եթէ Մխիթարն Հայրենատեաց զօրէն անառակի որդւոյն ոչ շատացաւ ընդ այլ ծառայակից իւր վայելել կշտապինդ զշնորհս մաքուր հացին ուղղափառութեան 'ի տան գորովագութ հօրն մերոյ Վրիդորի, այլ ստահակ յոգի բերեալ ապստամբեցաւ 'ի նմանէ, առեալ զբաժին ժառանգութեան իւրոյ ջոգաւ 'ի հեռի աշխարհդ։ Յետ ոչ սակաւ աւուրց վատնեաց զինչս Հայրենեաց իւրոց, յաբեցաւ ո՛ւր և յարեցաւ, կերր զապուխ եղբայրատեցութեան, որով արդ որդւոյդ ատամունք առնիլ սկսան։

Ասացէք, եթէ ողորմելին Մխիթար 'ի նախանձոտ յազգակցացն իւրոց հալածեցաւ տարապարտ և 'ի նանիր, և բազմիցս աշխատ եղեւ, այլ չեղեւ հնար նքմին զբարի և զազգօգուտ նպատակ սրտին իւրոյ 'ի գլուխ տանիլ, ուստի հարկեցաւ ակամայ զդադար դիւրութեան իւրոյ 'ի Վենետիկ հաստատել։

Ահա քեզ պատասխանի լի խմատու-

թեամբ և հակառակ առաջնոյ բանին, եթէ արդարև Մխիթարն զմոլորութիւն ազգին իւրոյ տեսեալ՝ խոյս եւ տ'ի նմանէ, ուրեմն անպատեհ է ասել թէ հալածեցաւ. իսկ եթէ առ 'ի կատարումն փափաքանաց ազգատեաց սրտին իւրոյ, զվայելուչ տեղին զայն խնդրեաց, յայտանէ հետեւի թէ ոչ սակս մոլորութեան Ազգին խորշեալ 'ի բաց չոգաւ 'ի նմանէ, այլ վան 'ի գործ դնելոյ զչարայղաց ծնունդ մոլորեալ մտաց իւրոց. և Պատն պաշտպան եղեւ նմա յամենայնի, որպէս տոկորութիւն է նորին առաւել եւս խնամ տանել օտարացն քան թէ ընտանի ազգին իւրոյ. զի եթէ բիւրս վանիցէ 'ի սեպհական հօտից իւրոց ոչինչ հոգայ կամ տրտմի, իսկ եթէ զդառնուկ մի յափշտակիցէ յայլոցն՝ ուրախութիւն բաղում է նմա։

Ո՛չ ապաքէն յամենայն կողմանց ստիպոտանելի ցուցանէք զՀայրն ձեր անհաստատ բանիւք. եթէ հալածեցաւ 'ի Պոլսոյ, ամենայն ասեմ ձեզ ոչ պակասէին նմա այլ ամենայն քաղաքք Հայաստանեայց. Հայրենասիրութիւն, ազգասիրութիւն ուղղափառութիւն նորին չէր առաւել քան զՍոսկիսի խորենացւոյն, որ առ լուսաւորութեան հայրենեացն ընդ ծով և ընդ ցամաք տաժանագնաց եղեւ, տա-

ռապեցաւ պանդխտութեամբ, և յոգնու-
ցեն ժողովեալ յոգի իւր զնիւթ ազնիւ
գիտութեան, այն ինչ իբրեւ զնաւ շա-
հաբեր դառնալ կամէր 'ի հայրենին, և
զ\'Ի թենեան տաճար անդէն կանգնել. ո՞հ
վրիպեցաւ երանելին 'ի մեծ յուսոյն իւրոյ,
չետես զյարգոյն ուսման իւրոյ զ\Սահակ
և զ\Մեսրոպ, չեգիտ պատիւ որպէս կար-
ծէրն, չեղև նմին ոք սիրով տապնջական,
սատ և անդ թափառեցաւ պարկաբարձ,
զաւուրս իւր անցոյց քաղցիւ և ծարաւով
և տրտմութեամբ և ապով. \Նա 'ի վերոյ
այսր ամենայնի ընտրեաց բնակիլ իբրեւ
'ի տան առ գերեզմանաւ սիրելի հարցն
իւրոց. լալով ելից դառնապէս, տրտունջ
եբարձ զապրէն իւրոյ, տակայն ոչ հերե-
տիկոս համարեալ զնա խորշեցաւ 'ի նման-
նէ, կամ իսպառ մոռացաւ զնա, սիրեաց
բնակիլ 'ի նմա քան երանելի 'ի նմանէ։

Ընարէր \Մովսիսի մեծագոյն ջանիցն 'ի
\Յունաստան կամ յայլ պատշաճնագոյն
վայր դիմել նման \Միխիթարայ, և անդէն
զպեղեցիկ նպաստակ որսին իւրոյ 'ի կատա-
րումն ածել։ Զարար զայս \Մովսէս զի զо-
բինակ համբերութեան և հայրենասիրու-
թեան թողցէ Հօրն ձերու մ \Միխիթարայ,
որ աւաղ զայսու օրինօք անցեալ՝ սիրեաց
զօտարին աշխարհ քան զքնակատեղի
հայրենին իւր \Վերատոիա։

Զ ատագոյնցէք թէ երանելին \Միխ-

թար իբրեւ զնարատանկ ծառ 'ի Սեբաս-
տիոյ փախեալ 'ի կղզիս անկեցաւ և պտղա-
բերելեալ մեօք յարդեցոյց զողջ Հայաստան,
զի է ձեզ ուտել և լիանալ և զերախտա-
ւորն հանդերձ աշակերտօք արհամար-
հել և զանալ զվաստակ քրտնաջան մշա-
կացս որ 'ի հարիւր և յիսուն ամաց անսի-
զտիւ և զգիշեր անխոնջ աշխատելով՝ զայն-
քան հատորս զանազան մատենից ընծայե-
ցաք ձեզ ազգիդ Հայոց։

Այլ այս արդարեւ շնորհ մեծ ունիմք
զձէնջ և երախտապարտ զմեզ ճանաչելով՝
բազում անդամ 'ի բազում ուրեք գոհու-
թիւնս լիաբերան մատուցաք ձեզ, և յու-
սալ գրիչք 'ի մէնջ ձեզ 'ի գովութիւն շար-
ժեցաք, նա մանաւանդ Ջատագով և
պաշտպան եւս լինել՝ յաւուրս յայսոսիկ։
Այլ միթէ և դուք զերախտիս Հայոց
Ազգին ունիք զանալ, մի՞թէ Ազգասէր
անձինք ոմանք կրկնապատիկ վարձատրութ-
ին պակեցին զձեր աշխատասիրութեան
գործ, յորոց, որ առաւել բարերարն ճա-
նաչէր՝ յետ Աստուածասէր և բարեպաշ-
տօն անուամբ պատուելոյ 'ի ձէնջ, ոմ-
յեսին տմարդութեանս. իբրեւ հերե-
տիկոս նա ընդ մեզ դասեցաւ այժմ, զար-
մանամ, թէ զիա՞րդ կարէ հերետիկոս ոք
բարեպաշտ և Աստուածասէր կոչիլ։ Ոչ
գիտեմ ո՞րպիսի են ծառքդ և յորո՞յ ազգէ,
որ զչար և զբարի պտուղ մարթացան բե-

ել հակառակ տէրունական բանին։ Որ-
պիսի է աղբիւրդ, որ անդատին յանանէ
իւրմէ բղխեաց 'ի վերս զքաղցրն և զդա-
ռն։ Ասա՛, յայտ է թէ կեղծաւոր
և շողոքորթ բարուք և բանիւ հպեալ
ողջոյն մատուցանէք վարդապետ կոչելով
և զկնի զՅուդային գործել ոչ ամաչէք։
Եւ զայս, գիտեմ, ոչ այնչափ վասն Հռ-
ոմայ եկեղեցւոյն՝ որչափ առ երկրաւոր
շահու ձերոյ յօժարիք առնել, և չածէք
յուշ միանգամ թէ հաւատք ծածկեալ
և կեղծաւորեալ, ոչէ հեռի յանհաւատու-
թենէ, դուք ընդէր պատիր բանիւք ձե-
րովք խաբէք զՀռոմ զհաւատն նորին ընդ
մեռոտի շահու վաճառեալ։ Երանելին այն
տակաւին չիմանայ, թէ որպէս զՀայաս-
տան բարեկամ կոչելով խաբեցին, նոյնպէս
և զՀռոմ առ երեսս ուղղափառ կոչե-
լով խաբեն. ծանուցայք 'ի վերջին պտղոց
ձերոց, ո՞վ ծառք Ամիթարեան չեն պի-
տոյ այլ եւս վասն փորձոյ և ճանաչելոյ
տալ ձեզ զպտուղ։

Իբրեւ յոյժ իմաստուն այլով ամենայ-
նիւ երեւիք և պանծայք յանձինս ձեր,
ընդէր և զայս ճշմարտութիւն անկարտա-
նայք 'ի քննել։ Որ համագումար սուրբ
ժողով Հայրապետաց զՀայոց եկեղեցին
իբրեւ հերձուած և մոլար դատապարտե-
լով՝ հատ զնա 'ի մարմնոյն Քրիստոսի,
Ամիսոյն, թէ Նփեսոսին, Կոստանդնու-

պօլսոյն եթէ քոյդ Ֆաղկեդոնին, Իսկ արդ՝ եթէ 'ի վճիռս այնքան հոգեգումար տուրբ Այրապետացն չէք և չէք բնաւ այդպիսի նշմարանք ինչ, հապա որոյ իցէ այս ա՝ նիրաւ դատապարտութեան վճիռ, թե՞ բեռս յեռանորդաց Պապից 'ի ձեզ պիսեաց խաբելոց, որք անձնապանծ և ինքնահրնար վարդապետութեամբն եօթն դժոխոց մատնեն զեկեղեցիսն՝ որ արտաքոյ են 'ի բուռն իշխանութենէ Պապին, և չճանաչեն զնա մի միայն փոխանորդ քրիստոսի, տէր և կառավար միապետական հանուր եկեղեցեաց։ Ո՞վ անմերձելի և հպարտ վարդապետութեան, հակառակ հեզ և խոնարհ վարդապետութեան Յիսուսի. որ նախատես լեալ ապագայ հակառակութեան ընդ վիճել աշակերտացն՝ յառաջագոյն զգուշացոյց ասելովն, " Թէ որ 'ի ձէնջ մեծ լինել կամի՝ լիցի ձեզ ծառայ և կրտսեր, և որ առաջ համարեցի զանձն 'ի միջի ձերում՝ գիտէք, զի իշխանք ազգաց տիրեն նոցա և մեծամեծք իշխեն նոցա. ոչ այնպէս պարտ է լինել և 'ի ձերում միջի, քանզի ամենեքին դուք եղբայր էք և հաւասար ծառայակիցք »։ Սիրով ունկն մատոյց Պետրոս խրատոյս այսմիկ խոնարհ հաստատ վարդապետին և ուսաւ 'ի նմանէ զնոյն օրինակ գնալ, և չգտանեմք բնաւ 'ի գիրս և 'ի վարս նորին, յորս նշմարել հնար իցէ միապետական իշխանութի նորին։ Ով

հմուտքդ էք քաջ՝ բանից նորոյ կոտակին, խելամուտ ապարէք դմա. ինքն որ յաջորդ համարի լինել նախանոյն Պետրոսի. վասն զի ընդ խոնարհ ճանապարհ նորին զարուզի ընթանալ բարձրութեամբ, և ոչ լսէ խրատուն; չտիրել վիճակին իւրոյ բռնութեամբ, այլ ցած և խոնարհ վարուք ուսաբինութեամբ օրինակ լինել հոտին։ Իսկ դա հակառակ այսմ խրատու ոչ շատացեալ վիճակաւն իւրով՝ ձեռն արկանէ զ'Երիդորին և ս յափշտակել, որ այս իսկ երկրաւոր փառասիրութեան է նշանակ. և ոչ երկնաւոր սիրոյն։ Բանզի ճշմարիտ սէրն Քրիստոսական ըստ առաքելոյն բանի, ոչ խնդրէ զիւրն, ոչ նախանձի, չառնէ ինչ ըստ գրգռութեան և ոչ ըստ սընապարծութեան այլ մանաւանդ ուսուցանէ զմիմիեանս լաւ քան զանձիս համարել։

Պետրոս ոչ միայն հաւատոյ ճանաչէր զինքն 'ի մէջ երկուսանցն, այլ և երբեմն իբրեւ ապաստաւոր և ծառայ ընդ Յովհաննու լծակցեալ առաքեր Յիսուսաղէմէն 'ի Սամարիա յայցելութիւն հաւատացելոց. որք ինքեալ կային յաղօթս 'ի վերոյ նոցա։

Պետրոս չհամարձակի զինքն իրաւամբ երէց կոչել 'ի թուղթն, որ առ երիցունս եկեղեցւոյ, այլ ճշմարտութեամբ ճանաչելով զկարգ անձին իւրոյ, իբրեւ երիցա-

կից եղբայր աղաչէ։

Պետրոս իբրեւ ստոգտեալ իմն և կեղծաւոր՝ յանդիմանէր և ընդ այն չխոժոռի բնաւին. գիտելով զԹիւր ընթացս իւր հաւատեաւ, զոր ուղղեաց սիրով՝ դիւրահաւան լեալ կշտամբողական խրատուն Պօղոսի։

Տեսանէս Բրիտոսասէր աշակերտին զքաղցր հաւանութիւն կամացն, թէ որպէս զհեզ վարդապետին կերպարան ճըշգըրտապէս տպաւորեալ յանձին իբրեւ սպասաւոր վարի 'ի մէջ եղբարցն իւրոց։

Օ՛տիպ այսպիսի խոնարհութեան տեսանելով Պապին առ նախնին իւր Պետրոս՝ իբրև կենդանի պատկեր եղեալ յանդիման աչաց իւրոց, հապա ընդէ՞ր չկամի հայել ընդ այն՝ և յետս կասեալ 'ի նորին հեզութենէ՝ ո՛չ պատկառի հակառակ նմին վարդապետել և առնել։ Ա՛յս օրինակաւ և խոնարհամիտ ոգւոյն յօժարի մտադիւր ծառայել, ցածուն մնալ, 'ի կոչէն Ընքայութեան յետին վայր բազմիլ. իսկ դա բռնի կալեալ զՊետրոսն 'ի վեր բարձրացուցանէ և ջանայ, հրամայէ 'ի գահն առաջին նստուցանել։ Ա՛ւ զայս առնէ, զի և ինքն ընդ նմին պատուեալ բարձրացի, չածեալ յուշ զտերտունեան խրատն թէ "Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի"։ Դուք և ա՛յսմենայն կողմանց ձեռն տուեալ սատար լինիք դմա

պատիր և կեղծաւոր բանիւք ձեզ ոչ, մի գուցէ անկանիցի յինքնարգոյ բարձրութենէն, և չիմանայք, թէ ընդ բարձրանալն, յայնժամ իսկ անկեալ համարի։ Եւ զդիրս մարդատՀաճութեան բարեաւ ուսեալ, գիտէք՝ թէ և նա ճշտիւ չպատՀանչիցէ, ըստ պատշաճի անուն շնորհել, այդչափ պերճայելոյն ամբարՀաւաճ մաօք, որում և եթէ վայելուչ դատեալ է զանուն Սրբոյն Գրիգորի Բահանայապետութեան ըստ ձերում ուսմամբ բանից, որպէս թէ այդպիսի բարձր և ծայրագոյն աստիճանի նշանակիչ անուանք չէրն մեր բնաւ եղեալք՝ ի վերայ նախնի Հայրապետացն մերոց, կամ՝ ի զանազան թուղթս նոցին գրեալք, և ասէք չամաչելով՝ թէ Հայ.ք յետոյ ուստն՝ ի մէնջ նոյն անուամբ պատուել ՉԿԱԹՈՂԻԿՈՍ իւրեանց։

Ոչ՝ այլ էն պարծանս համարիք ձեզ այդպիսում վեհ Սրբոյն Գրիգորի Բահանայապետի որդիք կոչիլ արժանապէս, զի՝ ի հարազատ որդիութենէն ազգատիկ և ցանկալի Հօրն Գրիգորի մերում բազմերախտի, զոր խոստովանիք ակամայ յետ Հռոմայ գահոյն իբր գլուխ Ազգային եկեղեցւոյ իւրոյ, ստիպեալք՝ ի սուրբ և պատկառելի յանուանէն, ընտիր և սքանչելի վարուցն, մեծ և անկշիռ երախտեացն, և ուղիղ ևս լինէր եթէ գլուխ հերձուածողաց կոչէիք զնա, և զի այժմիկ եկե-

զէրցին Հայոց այնպէս տատապարտի 'ի ձէնջ։

Օ՜ի ջանայք սուտ առնել զՃշմարտութիւն պատրուակ բանիւք ձերովք, որ որդի հլու և հնազանդ ճանաչի հօրն, այն որ կամաց նորին հնազանդեալ սիրով՝ ընտրէ բնակիլ 'ի տան նորին հանապազ. եթէ այն որ զօրէն անառակի որդւոյն 'ի հրամանէ հօրն ապստամբեալ 'ի տար աշխարհ գնայ։ Դուք էք ուրեմն ըստ առաքելոյն, որդիք աննուէրք, անպտութք, անհաւանք ծնողաց, որ թողիք զնա։

Այսպէս, Դրիգոր վասն ձեր այնքան տարտափելի կատանաց համբեր սիրով՝ եթէ Մեղբեատրոս, Դրիգոր վասն ձեր 'ի չարաշուն վիրապին հնդեատան ամ խաւարաբնակ եղև, և 'ի լեառն Մեպուհ զբաղում ժամանակս հանապազատարած բակիօք աղօթեաց, եթէ Պատն Հռոմայ Պիտադ։

Պօղոս պարծի յաւէտ 'ի վերայ Կորնթացւոցն ասելով՝ «Թէպէտ և բիւր դաստիարակս ունիցիք 'ի Քրիստոս, այլ ոչ եթէ բազում հարս. զի 'ի Քրիստոս Յիսուս աւետարանաւն ես ծնայ զձեզ»։ Զունի արդեօք իրաւունս Սուրբ Հայրն մեր Դրիգոր պարծիլ նման Պօղոսի որ 'ի Քրիստոս Յիսուս ծնաւ զձեզ աւետարանաւն, ընդէր ապա զբազում հարս ըստանալ կամիք։

Ոչ այլ չունիք լուել, քաջ դիտեմ, և փութայք գիրաւացին տալ պատասխան, եթէ մեզ պարտ է արժանապէս պարծիլ իբրև հարազատ որդիք Գրիգորի, զի զնորին հնազանդութիւն, որ առ Պապն Հռոմայ ճշդիւրն օրինակեմք 'ի մեզ։

Որվ իմաստուն որդիք և մտավարժ, զի խորշիք զանուն հնազանդութեանս այսմիկ սէր, մտերմութիւն, ուրախակցութիւն և շնորհաւորութիւն կոչել, որք գլխաւոր պատճառ եղեն գնալոյն Գրիգորի և Տրդատայ 'ի Հռոմ, որպէս վ'լայեն ամենայն ողջամիտք։ Ոչ զինչ իցէ այս մտերմական սէր ընդ Գրիգոր և ընդ Սեղբեստրոս, արդեօք իբր փոխանորդ Քրիստոսի և միահեծան տիրող հանուր եկեղեցեաց ճանաչել զնա, եթէ զվճիռ Պապին անարիսալ ընդունել, զարարողութիւնն եկեղեցւոյն Սատինաց 'ի Հայաստան մուծանել, եթէ խոստովանիլն թէ չիք փրկութիւն արտաքոյ եկեղեցւոյն Հռոմայ, Քան լեցի կարծել զայս, զի սուրբն Սեղբեստրոս և այլ ընտրեալ յաջորդք նորին, Քրիստոսին հեզութեամբ և Պետրոսին աղքատութեամբ վարեցան և միայն յետին դարուց յաջորդք տեղի ետուն յոգիս իւրեանց մուտ առնել այդպիսի նոր, անլուր և հպարտամիտ վարդապետութեան, որ ամաչեաց մտանել 'ի դրունս վարուց առաջնոցն։ Եթէ

արդարև զայսպիսի հրաշալի պատմա-
ընկալեալ երանելւոյն Գրիգորի, էջ 'ի
Հայաստան, ընդէր անդէն սարսափելով
Հքարոզեաց 'ի լուր ժողովրդեան որով
գոնէ զփրկութիւն անձանց իւրեանց հո-
գւոյն և այնքան բազմութիւն հաւատա-
ցելոցն չմեռցին անհաղորդ և անման 'ի
Հնարհէ փրկութեան, մեռեալք արտաքոյ
փրկաւէտ վճռոյս։ Յո՞ր աստուածային
մատեանս նորա ընթերցեալ խելամուտ
եղէք այդպիսի նորահնար վարդապետու-
թեանց. եթէ բանիւ քարոզեաց, էր վա-
սն մօտագոյն ականջք աւանդապահ որդ-
ւոց և թառանց իւրոց Անտիոքիայի Վրդ-
դանիսի, Ներսիսի և Սահակայ Հայրացին
լսել, և միայն յետ բազում դարուց Ան-
նիթօռեանք և Սնխիթարեանք լուան. Բա-
յց այսպիսում սրալուր ականջանց, ա-
պատգամն աստուածային խուլք և ա-
յլեսին դարուց Պապիցն դիւրալուրք։

Համարեցուք այնպէս, որպէս դա-
դրք կարծէք, բայց սակայն իրաւունս պա-
հանջեմ 'ի ձէնջ, մի ընդ աչս դատիք,
այլ ուղիղ դատաստան 'ի միտս ձեր արա-
րէք։ Այնքան բազմաթիւ հաւատացեալք
նախկին դարուն սկսեալ յԱբգար Նախ-
հաւատ Անքայէն մերում մինչև ցլուսա-
ւորիչն, զկեցցէ՞ն արդեօք 'ի փրկութենէն
Քրիստոսի, զի մեռան արտաքոյ եկեղեց-
ւոյն Հռոմայ, որ յանժամ ոչ 'ի խաւար

հեթանոսութեան դանդաչէր Հռոմ։ Թողում զայլ եկեղեցիսն, որք յառաջ քան զքայդ Հռոմ ծաղկեցան հաւատով և եռուն պտուղ բազմապատիկ։

Օ՜ճշգրիտ և զանթերի դաւանութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ, ոչ ապաքէն ըստ ամենայն հանդամանաց կատարեալ հաւատոյ՝ գրէ, խոստովանի շնորհալին Ներսէս յընդ հանրական մատենին իւրում յորս չկարաց նշանախեց մի պակաս գըտանել եկեղեցին Յունաց, այլ մանաւանդ զարմացան, գովեցին և հաճեցան առնել զմիաբանութիւն երկուց արևելեան եկեղեցեաց։ Ուրդ՝ եթէ այդ վճիռք Հռոմայ իբրև մասն հաւատոյ համարին և համարեալ էին յանժամ, ընդէ՞ր անփոյթ արար Շնորհալին զնոքօք և չեդ՝ի կարգ դաւանութեան իւրում։ Ու՞ր ինքն միրոյ էր ուղղափառութեան և նախանձաւոր ճշմարիտ հաւատոյ, մի թէ հնար էր թագուցանել զայդ կարծեցեալ ճշմարտութիւնս վճռոց և զրկել զաղգն՝ի փրկութենէն Քրիստոսի։ Քա՛ւ լիցի ասել զայս այնպիսում հօր հոգեւորի. որ հանգոյն երկնաւորին ողորմած էր և գորովագութ, ՝ի խնդրել որդւոցն զհաց կամ զձուկ ո՞չ տայր նոցին զքար կամ զօձ։

Կարի դիւրագգաց խիղճս ունիք և ճեպիք ոչ միայն ըստ հոգորեւին Հայր ճանաչել զուսաւորիչն, այլ և չկամիք ու-

բանալ զնահատեան Հայկ և անուանէք զձեզ ուղղափառս որոնք Հայկայ։

Եւ ինձ զարմանք է առատանօր, եթէ զԱրիդարն թողեալ զԱսան ընկալայք. ընդէր և 'ի տեղի Հայկայ զՀռոմուլոս ոչ ընդունիք ձեզ Նախահայր որովհետև սիրելի է ձեզ 'ի Հռոմ քանակիլ քան Յունաստան, 'ի Լատինս յարիլ քան յորդիսն Հայկայ։ Թէ ընչալի է ձեզ Հայկայ որդի կոչիլ՝ վասն էր զհարազատութիւն սրեան և զօրինակ նախանձաւորութեան նորին չբերէք յանձինս ձեր։ Նա յուշ ածելով զհայրենի աշխարհն իւր՝ ընդդէմ ախոժանացն էր 'ի Բաբիլոն բնակիլ՝ որ վասն զինքն 'ի բռնութիւն նորին 'ի բաց տարեալ չոգաւ 'ի բնականութեանդ գաւառն իւր անձկալի։ Ձեզ, գիտեմ, հեշտալի է Հռոմ քան զՀայաստան, վասնորոյ և անդ բնակիլ սիրէք։ Այլ և մի կեղծաւոր և համոզակեր բանիւք կամ 'ի ձեռն սպառնալեաց վճռոցդ պատուիրատ Հայաստան առաքել յանձախիցէք, ամէն ասեմ ձեզ, ոչ ասեմ Հայկ չկամի հնազանդել դմա։ Իսկ եթէ 'ի ձեռն սոայօդ գրոց զօրաժողով լեալ խաղաչէք 'ի վերայ նորա՝ 'ի նուաճել պատրաստէ կորովին Հայկ քաջապունդ որդւովք իւրովք եկանել ընդդէմ և վահանաւ և ազեզամբ ճշմարտութեան մարտնչել և խորտակել զզօրութիւն ձեր։ Դուք բաւական էք

Հոսանայ, որ կեղծաւորութեամբ զհնա-
գանդութեան լուծ նորին 'ի պարանոցս
ձեր ընդունեալ երևիք, զոր յաւուր մի-
ում ի եղջերը ապստամբութեան թօթափե-
լոց էք։ Բայց արդ կայջիք և մնայջիք
այդր և ասեալք ձեր ցրուեսցին յերկրիդ
Իտալիոյ, որովհետև չյուսայք և չկամիք
կամակորութեամբ՝ յԱ.յրարատ ելանել
'ի Վրիպորին գիրկ և վայելել զսէր և
զշնորհս նորին, մեռջիք 'ի ծոց Հոս-
տայ զի թերևս փրկութեան հասանել
արժանաւորեսջիք, թող որդիքն Վրիպորի
ելցեն 'ի խաւարն արտաքին ըստ անհը-
բաժեշտ վճռոյ հրաշալի ատուածաբա-
նութեան տուրբ ժողովոյն Վրոբական-
տայ։

Ուստեղ քեզ գերապայծառ Հաստն,
ուրախ լեր այսուհետեւ և ցնծացեն որ
ընդ քեզ ժողովուրդք, զդաշն սիրոյ և խա-
ղաղութեան դիք 'ի միջի ձեր. բարձէք
զչար խուսվութիւն, զհեռ, զնախանձ,
զատելութիւն 'ի միջոյ, զի ահա ուխտ Ա-
խիթարեան մերկեաց յինքեանէ զպատրուակ
քօղն կեղծաւորութեան և հոմանձայն քեզ՝
հերետիկոս դատեաց զ՝զդն Հայոց մեծա-
ձայն հրապարակաւ։ Ասաց ձեզ այսուհե-
տեւ հաշտութիւն տանել ընդ միաբանս
փառն Քրիստոսի։ Իսկ եթէ տակաւին ոչ
միաբանս խոնարհիցէք, զգոյշ ընթացք ըստ
Պօղոսի քարոզին, գուցէ 'ի միմեանց տա-

տակիցէք։ Խնայեցէք յողորմելի ժողովուրդն և 'ի հօտն որ 'ի պատճառս ձեր խբրև զծով ծփայ և մոլորեալ չգիտէ թէ ո՞ւր կորուսեալ է զհովիւն իւր քաջ։

Ողբամ զձեզ Հայրենեաց որդիք, ողբամ զձեզ ոչխարք հովուակերոյս որոշեալք և զատուցեալք 'ի հօտէն Տրիպոլի։ Կրեալց է նա դատապարտան 'ի տեառնէ որ հան և զրկեաց զձեզ 'ի դալար արօտէն Հայրապետայ և 'ի ջրոցն հանգստեան և այդպէս տարեալ յօտար լերինս և 'ի բլուրս Իտալիոյ՝ թափառեցուցանէ անխնայաբար։ Ողորմելի ժողովուրդ, դոքա որ երանեն զձեզ, զշաւիղս ոտից ձերոց խառնեցուցանեն ընտ Հայեաց բանին։ Այլ փախանակ խաղաղարար լինելոյ և որդիս Հաստուծոյ կոչելոյ, խառնեն և արկանեն զձեզ թշնամութեամբ ընդ միմեանս, ոչ զի 'ի տեղի երանութեան՝ զվայն ժառանգելոց են անշուշտ։

Հաւատք լուարուք, ո՛ ապաստամբ հովիք, նախանձաւորդ Հռոմայ Հաւուն, և իմաստուն Ինիթարեան, ապառնալեօք վայ կարդայ նմին տէրունեան բան, որ զոգի մի փոքրիկ դայթակղեցուցանէ, քանի՞ ապա, որ զբազմութիւն ժողովրդոց միանգամայն։ Օ՛ն անդր 'ի բաց թողէք զայդ յիմարութեան բարբանջմունս, և դիք դուռն բերանոյ ձերում և սանձ լեզուի չասել զայն Հայոց։ Յորում դուքդ

կայք, չբամբասել զեկեղեցին Հայաստանեայց իբրեւ հերձուած յորմէ դուքդ հեռանալ ելեալ ապաւում մաօք։ Հապա մի այն ջանացէք, զի զայդ գայթակղութիւն խռովութեան 'ի ձէնջ մերժել և հալածել կարասջիք առանց զայլս գայթակղեցուցանելոյ։

Այլ մեք արդ՝ քանի՞ հնարհ, որպիսի՞ գոհութիւն մատուցանել պարտիմք աստուծոյ Աստուծոյ. ընդէ՞ր, զի բարութեան ձերում մասամբ իմն առիթ գտայք, և հերետիկոս անուն մեր իբրեւ կապ սիրոյ և միաբանութեան լինելոց է 'ի մէջ խռովութեամբ բաժանելոցդ, նա մանաւանդ նուէր իմն հաշտութեան 'ի միջի երկուց հակառակող համակրօն թշնամեացդ որպէս անմեղն այն Յիսուս ընդ մէջ Հերովդէսի և Պիղատոսի։

Իսկ իմ զդէմ բանիս առ քեզ դարձուցեալ, ո՞վ Հայաստանեայց ուղղափառ կաթուղիկէ և առաքելական սուրբ Եկեղեցի, կնքեմ զընթացս բանիս դուզնաքեայ, մի՛ վշտանար, մի՛ տրտմիր, սուրբ Անիթարեան խոցել կամեցաւ զքեզ, դա՝ որ ըզդեցեալդ էր զզրահս ճշմարտութեան, մի՛ զանգիտեր չազդէ քեզ այնպիսի սուր։ Դա՝ որ ո՛չ միայն առաքելական, այլ և Բրիտանադիր հիմամբ հաստատեալ կաս, որ էջն Ա. յրարատ և ուռամբն ոսկի խառըապոյնս և անշարժ հիմնեաց զքեզ, ո՞ր զո-

բութիւն հողմոյ կարէ դրդուեցուցանել զքեզ անդուստ։ Աղքրութիւն, ողջմտութիւն և սրբութիւն քոյին քան զսակի աւաւել պայծառապոյն փայլի, մի թէ հակառակորդք քո զօրեն բիծ և արատ դնել ամենևին գեղեցկիդ և անտիսեղծ մարմնոյդ գլխոյն Քրիստոսի անդամոյդ։ Զոր հօտ ես լուսակէզն ըստ տեսլեան Զրիգորի լուացեալ մկրտութեամբ յաւազան Հիրադայ, որ զդաշտիւն ծովանայր կապուտակ, 'ի քէն ելեալ գայլքն կամին յարձակել այսպէս և խողխողել զքեզ նենգաւոր լեղուաւ, բայց դու ողջմտութեամբ քոյին թևաբոյս լեալ թռչիս յերկնից հանդիսան։ Զոր 'ի ձեռանէ հօրն Զրիգորի և յԱրկեղեցւոյդ մերժեցան, սակայն մեք սեպհական ժողովուրդք եմք քեզ և իսաշն ուղիղ վարդապետաւեն արօտիդ։

Հապա մի ցաւիր, մի խռովիր, մի տագնապիր ընդ անիրաւ նախատինս թշնամոյն. այլ մնանաւանդ ուրախ լեր զի մնանակից լիցիս Քրիստոսի երանութեան որ առ աշակերտսն։ Միայն աղօթեա, մաղթեա 'ի վերոյ նոցին, որով գաւցէ երջանիկ Հօրն մերոյ սրբոյն Զրիգորի բարեխօսութեամբ 'ի զդաստութիւն եկեալ՝ դարձեալ 'ի քիկ խաւնեանցին, քանզի եղբայր մեր են և ոչ յօտար յարենէ։

1853

3n